ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԸ

1948 թվականի հոկտեմբերի 15-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ընդհանուր ժողովը։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանը բաց անելով ժողովն, ասաց.

— Ընկերներ, թեպետ մեզ մոտ մեկ ամսից հետո չինելու է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ընդհանուր ժողովի նստաշրջան, ինչպես լինում է միշտ, սակայն Ակադեմիայի նախագահությունը նպատակահարմար գտավ այսօր նշանակել ընդհանուր ժողովի մի նիստ, որտեղ կլսվի Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Ի. Ալիխանյանի զեկուցումը՝ «Նոր տարրական մասնիկներ կոսմիկական ճառագայթների կազմում» թեմայով, և կկատարվեն Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի երկու նոր իսկական անդամների ընտրությունները։

Պետք է նկատել, որ ընդհանուր ժողովի այսօրվա նիստին դրվող հարցերը— ինչպես գիտական, այնպես էլ կազմակերպական հարցերը— ունեն չափազանց կարևոր նշանակություն։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Ի. Ալիխանյանն այսօրվա իր զեկուցումով մեզ հաշվետվություն պետք է ներկայացնի այն խոշորագույն և բացառիկ կարևորություն ունեցող աշխատանքներից մեկի մասին, որը կատարվում է մեր Ակադեմիայում և որը, ինչպես բոլորին հայտնի է, ունի համաշխարհային նշանակություն։

Ահա թե ինչու մեր Ակադեմիայի իսկական անդամները և ուրիշ շատերը չերմ ցանկություն հայտնեցին վերը հիշված զեկուցումը լսել մեր Ակադեմիայի ընդհանուր ժողովում։

Բացի դրանից՝ մեր առաջ ծառացած են խոշոր խնդիրներ, որոնք առաջադրվում են էլեկտրոնի հոդվածից։ Այդ կարգի խնդիրներից մեկն է՝ մեր Ակադեմիայի ամբողջ աշխատանքը մոտեցնել սոցիալիստական շինարարությանը։

Բիոլոգիական հարցերի շուրջը Վ. Ի. Լենինի անվան Գյուղատնտեսական Գիտությունների Համամիութենական Ակադեմիայի օգոստոսյան սեսիան, որն ավարտվեց միլուրինյան բիոլոգիայի հաղթանակով, ինչպես նաև Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Բիոլոգիական գիտությունների Բաժանմունքի և Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքի վերջերս կայացած միացյալ սեսիան, մեր առաջ խնդիր դրեցին որոշ վերակառուցում կատարել Բիոլոգիական և Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքների աշխատանքների մեջ, այսինքն, ինչպես ասացի, աշխատանքը մոտեցնել կյանքին, մոտեցնել սոցիալիստական շինարարությանը։

Այս տեսակետից չափազանց մեծ նշանակություն կունենա մեր Ակադեմիայի իսկական անդամների կազմի ուժեղացումը, մի կողմից՝ գյուղատնտեսական ու բիոլոգիական գիտությունների և, մյուս կողմից՝ այլ գիտությունների բնագավառում աշխատող նոր ընկերներով։

Այդ գիտությունների թվում մեզ համար խոշոր նշանակություն ունի երկրաբանությունը, որը չափազանց կարևոր է երկրի ընդերքում թաքնված բնական հարստություններն ուսումնասիրելու տեսակետից։ Մեր Ակադեմիայի իսկական անդամների կազմը լրացնելու կապակցությամբ կառավարության կողմից թացված է իսկական անդամության երկու վականտ

տեղ՝ մեկը Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքի, իսկ մյուսը Ֆիզիկո-մաթեմատիկական-բնական և տեխնիկական գիտությունների Բաժանմունքի գծով։ Պարզ է, որ աշխատանքները Բիոլոգիական ու գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքներում վերակառուցելու և պատշաճ բարձրության վրա դնելու համար, հարկավոր է որոշ վերակառուցում կատարել և ահա այդ կապակցությամբ Նպիտակահարմար Ընդհանուր Ժողովի առաջ դնում է որոշ խնդիրներ։

Պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանի նեղածական խոսքից հետո Ընդհանուր Ժողովը լսեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Ի. Ալիխանյանի զեկուցումը՝ «Նոր տարրական մասնիկներ կոսմիկական ճառագայթների կազմում» թեմայով, և այնուհետև զբաղվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի երկու իսկական անդամների ընտրության հարցով։

Ընդհանուր Ժողովի կողմից, գաղտնի քվեարկությամբ, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի անդամներ ընտրվեցին Մաղաքյան Հովհաննես Գևորգի— Ֆիզիկո-մաթեմատիկական, բնական և տեխնիկական գիտությունների Բաժանմունքի գծով և Բարաթանյան Գևորգեն Հմայակի— Գյուղատնտեսական Բաժանմունքի գծով։

Ընդհանուր Ժողովը լսեց Ակադեմիայի Նախագահության գիտական քարտուղար Տ. Ռ. Պետրոսյանի զեկուցումը Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքի և Բիոլոգիական գիտությունների Բաժանմունքի նոր կառուցվածքի մասին։

Ընդհանուր Ժողովը լսելով Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանի հաղորդումն այն մասին, որ Ակադեմիայի Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, Նախագահության անդամ, Ակադեմիայի իսկական անդամ Մ. Գ. Թումանյանը վատառողջ լինելով, մեկ տարուց ի վեր ցանկանում է ազատվել Բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի և Նախագահության անդամի պարտականություններից, որոշեց՝ 1) Ակադեմիայի իսկական անդամ Միքայել Գալուստի Թումանյանին, համաձայն իր դիմումի, ազատել Ակադեմիայի Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի և Ակադեմիայի Նախագահության անդամի պարտականություններից և 2) նշել Ակադեմիայի իսկական անդամ Միքայել Գալուստի Թումանյանի որպես Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի բեղմնավոր աշխատանքը և Ընդհանուր Ժողովի կողմից շնորհակալություն հայտնել նրան։

Այնուհետև Ընդհանուր Ժողովը գաղտնի քվեարկությամբ միաձայն, Ակադեմիայի Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար և Ակադեմիայի Նախագահության անդամ ընտրեց Ակադեմիայի իսկական անդամ Գևորգեն Հմայակի Բարաթանյանին։

* *

1948 թ. նոյեմբերի 25—27-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ընդհանուր Ժողովը։ Մասնակցում էին՝ Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի և Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ներկայացուցիչները։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանը բաց անելով ժողովը, ասաց.

— Ընկերներ.

Քսանութ տարի է անցել այն օրվանից, երբ հայ ժողովուրդը, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ, թոթափելով ոճրագործ դաշնակների ու թուրքերի լուծը, իր երկրում հաստատեց սովետական կարգեր։

Քսանութ տարի անընդհատ շարունակվում է Հայաստանում ստեղծագործական աշխատանքը։

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայում, բառացիորեն դատարկ հողի վրա, ստեղծվեց խոշոր արդյունաբերություն։ Մեր գյուղերում ստեղծվեցին կոլխոզներ, մեր դաշտերը ծածկվեցին ոռոգման լայն ցանցով։ Մի քանի անգամ ընդարձակվեցին ու բարեկարգվեցին մեր քաղաքները, այդ թվում նաև մեր չքնաղ Երևանը։

Տնտեսության բոլոր ճյուղերի հետ միասին շտեսնված ծաղկման շրջան են ապրում նաև մեր գրականությունը ու գիտությունը։

Գերմանական ֆաշիստների ավերիչ հարձակումը մեր երկրի վրա չկանգնեցրեց կուլտուրական շինարարությունը մեր ռեսպուբլիկայում, ինչպես և ամբողջ Միությունում։ Դրա փայլուն ապացույցը հանդիսացավ այն, որ Հայրենական Պատերազմի ծանր տարիներին, սրանից ուղիղ հինգ տարի առաջ, հիմնադրվեց մեր Գիտությունների Ակադեմիան։ Անցած հինգ տարիների ընթացքում շնորհիվ մեր Պարտիայի ու Կառավարության հոգատարության, մեր Ակադեմիայի աշխատանքը շարունակ ծավալվում էր։ Ավարտվեցին մի շարք գիտական աշխատություններ, որոնք բարձր

դնահատության արժանացան մեր ժողովրդի և Կառավարության կողմից։

Կառուցվեցին և շարունակում են կառուցվել Ակադեմիայի գիտահետազոտական շենքեր։ Աճեցին նոր, ընդունակ կադրեր։ Մեր բազմաթիվ լաբորատորիաներն ստացան նոր ազդույն սարքավորում։ Ստեղծվեցին բոլոր պայմանները՝ երկրին ամենալուրջ գիտական պրոդուկցիա տալու համար։

Համեմատելով, սակայն, այդ պայմանները կատարված աշխատանքի հետ, մենք համոզվում ենք, որ ավելի լավ աշխատելու դեպքում մենք կարող էինք տալ ավելի մեծ քանակությամբ և ավելի բարձր որակի պրոդուկցիա։ Այդ նպատակին հասնելու համար պետք է ավելի լարված աշխատել մեր լաբորատորիաներում, փորձադաշտերում և գիտա-հետազոտական հիմնարկներում։

Մեր ուժը նրանումն է, որ մենք ապրում ենք սովետական հասարակակարգի պայմաններում և սոցիալիստական եղբայրական ռեսպուբլիկաների գիտնականների հետ մեկտեղ լուծում ենք ընկեր Ստալինի կողմից առաջադրված խնդիրը ամենակարճ ժամանակամիջոցում գերազանցել մեր երկրի սահմաններից դուրս գիտության նվաճումները։

Իսկ մեր Քերությունները կապված են մեր վատ աշխատանքի հետ, և մենք ի վիճակի ենք հաղթահարելու այդ թերությունները։

Ընկերներ, մեր Ակադեմիան մտադրություն չի ունեցել տունելու իր հնգամյակը, բայց քանի որ մեր ներկա նստաշրջանը համընկնում է Ակադեմիայի հիմնադրման հնգամյակի հետ, թույլ տվեք ողջունել Ակադեմիայի կոլեկտիվը այս տարեդարձի առթիվ, այլև ողջունել ներկա գտնվող բոլոր հյուրերին, մասնավորապես Վրացական ու Ադրբեջանական եղբայրական ռեսպուբլիկաների Ակադեմիաների ներկայացուցիչներին։

Անդրկովկասի ժողովուրդների բազմադարյան բարեկամությունը նոր իմաստ ու բովանդակություն է ստացել սովետական պայմաններում։

Մեր երեք ռեսպուբլիկաներն իրար հետ կապված են կյանքի և աշխատանքի բոլոր բնագավառներում։ Այդ կապը առավել ևս անհրաժեշտ է ամրացնել գիտության մեջ և, մասնավորապես Գիտությունների Ակադեմիաների մեջ։ Ես գիտեմ, որ այս հարցում մենք դեռ շատ անելիքներ ունենք և ավելի շատ, քան մինչև այժմ, կարող ենք իրար օգնել։

Թույլ տվեք Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Գիտությունների Ակադեմիայի Ընդհանուր ժողովի նստաշրջանը հայտարարել բացված։

Այնուհետև Ընդհանուր ժողովը լսեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանի զեկուցումը՝ «Աստղային ասոցիացիաներ» թեմայի մասին և Ա. Ն. Մնացականյանի՝ «Կովկասի հերոսական պաշտպանությունը 1942—1943 թ. թ.» զեկուցումը։

Նոյեմբերի 28-ի նիստում Ա. Ա. Ռուխկյանը զեկուցեց «Կիսանուրբ բրդավոր ոչխարների նոր ցեղը» թեմայի մասին։ Մ. Կասյանը՝ «Բնական շինարարական բարերի մեխանիկական մշակման հարցերը» թեմայի մասին։ Նոյեմբերի 28-ի նիստում լսվեց Խ. Ն. Մոմջյանի «Մետեոագործական ակտիվությունը որպես սովետական մարդու տարբերիչ հատկություն» զեկուցումը, այնուհետև՝ Հ. Կ. Փանոսյանի «Միկրոորգանիզմների անտագոնիզմը և նրա նշանակությունը» զեկուցումը։

Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանն իր եզրափակման խոսքի մեջ նշեց, որ սեսիայի ընթացքում լսված մի շարք հետաքրքրական զեկուցումները ցույց են տալիս մեր գիտա-հետազոտական հիմնարկներում կատարված գիտական խոշոր նշանակություն ունեցող աշխատանքները և վերջիններիս արդյունքները՝ մեր ժողովրդական տնտեսության համար։